ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Գ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ներսես Լամբրոնացին (1153—1198) Կիլիկիայի հայկական պետության այն նշանավոր մտավորականն ու գործիչն է, որի անձի ու գործի շուրջը հակասական կարծիքներ են արտահայտվել դեռևս նրա կենդանության ժամանակ։ Դրա պատճառը այն է, որ նա խորապես հետաքրքրվել է ժամանակի հասարակական-քաղաքական իրադարձություններով և ակտիվորեն մասնակցել դրանց՝ պարզորոշ դրսևորելով իր դիրքորոշումը և եռանդուն պայքարել իր համոզմունքներն իրականացված տեսնելու համար։ Իր կարճ կյանքի ընթացքում նա գրել է մոտ 35 անուն աշխատություն[1], որոնցում շոշափել է նաև տեսական-փիլիսոփայական հարցեր։ Սույն հոդվածը առաջին փորձն է իր բնորոշ գծերի մեջ ներկայացնելու Լամբրոնացու փիլիսոփայական ըմբռնումները։

Մարդկանց փոխհարաբերությունների ու բարոյական բնութագրի, ինչպես նաև հասարակական-պետական հարցերին անդրադառնալիս Լամբրոնացու համար ելակետ է ծառայել մարդու կամքի ազատության մասին ուսմունքը։

Միջնադարյան մտավորականը բավականին հետևողականորեն պաշտպանել ու զարգացրել է այն տեսակետը, թե մարդիկ ու ժողովուրդներն են տնօրինում իրենց կյանքը և ճակատագրական չէ նրանց ուղին։ Մարդկանց գործողությունները կանխորոշված չեն որևէ մեկի կողմից և նրանք իրենք են պատասխանատու իրենց արարքների համար։ Եթե մարդու կամքն ազատ չլիներ և նրա արարքները կանխորոշված լինեին, ապա մարդը պատասխանատու չէր լինի իր արարքների համար և նրան հնարավոր չէր լինի դատապարտել։ Եթե ընդունենք, որ կամքը ազատ չէ և մարդու ճակատագիրը կանխորոշված ու նախասահմանված է, ապա դրանից կհետևի, դատում էր հայ մտավորականը, որ չպետք է հակառակվել չարին, որտեղից էլ այն բխի։ Լամբրոնացին կտրականապես դեմ է այն տեսակետին, ըստ որի եթե ազգը նվաճել ու կեղեքում են, ապա պետք է համբերել, քանի որ դա նախասահմանված է տիրող կողմից, և զուր կլինի դրա դեմ պայքարելը։ Նա գրում է. «Զի ամենայն ինչ մեր ի չարն որոշի և ի բարին ոչ ըստ բնութեան, այլ ըստ անձնիշխան կամաց, քանզի որ բարի է՝ կարող է չար փոփոխել և որ չար՝ կարող է բարի»[2]։ «Ես եմ առիթ իմոյ կործանման և ոչ բարկութիւնն աստուծոյ, զի ես տամ զանձն գիտութեամբ ուղղութեանն ի թիւր ճանապարհն և մեղանչեմ»[3]։

Այսպիսով, նա կամքի ազատության տեսության կողմնակից էր։ Մարդն ազատ է իր գործողությունների ընտրության մեջ. նա իր կամքի թելադրանքով կարող է և՛ բարիք, և՛ չարիք գործել։ Նա բանական էակ է և նախքան գործելը

---

1 Ներսես Ակինյան, Ներսես Լամբրոնացի, մաս Բ, Վիեննա, 1956։

2 Ձեռ. № 4694, էջ 197ա։ ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան)։ Սույն հավաքածոյից օգտվելիս այսուհետև նշելու ենք միայն ձեռ.։

3 Նույն տեղում, էջ 385բ։

խորհում ու կշռադատում է և դրանով էլ տարբերվում է կենդանիներից։ Լամբրոնացու կարծիքով՝ մարդուն այս կամ այն գործողությունը կատարել տալու համար նախ պետք է նրա «ներքին կամքը» նախապատրաստել դրան։ Իհարկե, Լամբրոնացին հասկանում էր, որ մարդը միշտ չի կատարում իր կամքի թելադրած գործողությունները։ Դրա համար էլ նա ներքին կամքը տարբերում է արտաքինից։ «Մարդս անձնիշխան է և ներքինս ունի կամս և արտաքին,— գրում է նա։—Արտաքին կամացս և մարմնոյս կարեն իշխել բազումք, բռնութեամբ ծառայեցուցանել և աշխատել։ Իսկ ներքնոյն ոչ բնաւ՝ ոչ ասառուած և ոչ սարդ, զի անձնիշխան է, այլ ծառայեցուցանէ զնա միայն սերն»[4]։ Դժվար չէ հասկանալ, որ Լամբրոնացին «ներքին կամք» ասելով հասկանում է մարդու համոզմունքն ու ցանկությունը, իսկ «արտաքինի» տակ՝ սոսկ նրա գործողությունները, որոնք կարող են միմյանց չհամապատասխանել։ Այս ըմբռնման մեջ արտացոլվել է ժամանակի հասարակական հարաբերությունների պրակտիկան, որը հիմնված էր հարկադրանքի ու բռնության վրա։

Սակայն Լամբրոնացին, չխիզախելով առաջ գնալ, կամքի ազատության վերաբերյալ իր մտքերն աշխատում է հաշտեցնել աստվածաբանական սկզբունքների հետ։ Մարդու կամքը չնայած «անձնիշխան է», ասում է Լամբրոնացին, բայց և այնպես աստված ամենագետ է, նրա գիտությամբ է տեղի ունենում ամեն ինչ։

Չնայած սահմանափակությանը, կամքի ազատության մասին Լամբրոնացու ուսմունքը պետք է դրական գնահատել, քանի որ այն ելակետային նշանակություն ունի սոցիալ-քաղաքական երևույթներ մեկնաբանելիս։

Լամբրոնացին գերագնահատում էր պատմության մեջ անհատի դերը։ Պետական-հասարակական գործերի հաջող ընթացքն ու ելքը, ըստ նրա, մեծ չափով կախված է այդ գործերի ղեկավարից, ուստի նա չպետք է ապավինի միայն իր ուժերին ու կարողություններին։ Իմաստուն առաջնորդի առաքինություններից մեկն էլ նրա համեստությունն է, որը պետք է դրսևորվի պետական գործերը տնօրինելիս խորհրդակիցների ձայնին ունկնդրելու, նրանց կարծիքը հաշվի առնելու մեջ։ Կառավարման միապետական ձևի դեմ չըմբոստանալով հանդերձ՝ Լամբրոնացին գտնում էր, որ պետական-հասարակական հարցերը չպետք է միանձնյա լուծում ստանան, այլ վճռվեն քննարկումից հետո։ «Որք իմաստուն առաջնորդք են՝ ստանան խորհրդակիցս և նոքօք զբանն վճռեն,— գրում է նա,— որպէս արարին հռոմաեցիքն և տիեզերակալեցին»[5]։ Լամբրոնացին ամենայն հավանականությամբ նկատի ունի Հռոմեական պետության ոչ միայն հանրապետական, այլև դրանից հետո ընկած այն ժամանակաշրջանը, երբ կայսրին կից դեռևս գոյություն ուներ խորհրդակցական օրգան՝ սենատ։ Ինչպես տեսնում ենք, հռոմեական հզոր կայսրության գոյատևման պատճառներից մեկը նա համարում է պետական իշխանության հաջող կազմակերպումը։ Վկայակոչելով Մակաբայեցիների ժամանակաշրջանի հրեաների պատմությունը (մ. թ. ա. II դ.), Լամբրոնացին հիացմունքով է հիշատակում, որ «50 այր ամենայն աւուր ի խորհուրդ նստէին և համաձայնութեամբ զիշխանութիւնն վարէին»[6]։ Պետական նշանակություն ունեցող հարցերի միանձ-

4 Նույն տեղում, էջ 20ա (ընդգծումներն ամենուրեք մերն են—Գ. Գ.)։
5 Ձեռ. № 1142, էջ 71ա։
6 Նույն տեղում, էջ 71բ։

նյա լուծումը չի կարող կատարյալ լինել, որովհետև անհատը, որքան էլ տաղանդավոր լինի, չի կարող անսխալական լինել։ Իսկ առաջնորդի սխալը միշտ խորը հետևանքներ է ունենում, ընդգրկում է կյանքի ավելի մեծ ոլորտ և երբեմն հնարավոր չի լինում ուղղել։ «Առաջնորդ, եթէ հոգևոր և եթէ մարմնաւոր, որ ինքնիշխանութեամբ կատարէ զգործն՝ փրկութիւն ոչ կարէ ուղղել ընդ ձեռամբ անկելոցն»[7],— գրում է Լամբրոնացին։ «Երկրագործին սխալանք անձին միայն վնասէ, իսկ թագաւորին ամենայն աշխարհին»[8]։ Ահա այն սկզբունքը, որն, ըստ Լամբրոնացու, պետք է հաշվի առնի յուրաքանչյուր պետական-հասարակական գործիչ։

Լամբրոնացին արդար է համարում ժողովրդի զայրույթն այն թագավորների ու իշխանների նկատմամբ, որոնք քաղաքների ու գավառների ղեկավար են նշանակում չար, ագահ ու ապաշնորհ մարդկանց։ «Արդարև անիծանեն ժողովք զթագավոր կամ զիշխան,— ասում է Լամբրոնացին,— որք անբարիշտ ու անիրաւ մարդոյն համարձակութիւն տան ի վերայ քաղաքաց և գաւառաց՝ զգլել զաւքատս և շարշարել ի տարադէպ իրս զմարդիկ, զայս անբարբշտի տոստղն անիծանեն և ատեն ազգ, որոց իշխէ նա»[9]։

Այստեղ դրսևորվում է նաև Լամբրոնացու ժողովրդասիրությունը, որին մտահոգել ու վիշտ են պատճառել սոցիալական կյանքի անարդարությունները, ժողովրդական մասսաների անմխիթար վիճակը և ունևորների անպատիժ արարքները։ Լամբրոնացին դատան ու ագահ թագավորներին և իշխաններին նմանեցնում է առյուծի ու գայլի հետ, առյուծի՝ «զի այս գազանս զօրաւոր է և կարող ի վերայ այլոց գազանաց» և գայլի՝ «վասն յափշտակասեր մտացն, զի ունելով զկարութիւնն ըստ իշխանութեան և զագահութիւն՝ յափշտակութեամբն բռնադատէ զաղքատս, տուգանէ զմեծատունս, ծանրացուցանէ զհարկսն, ստրկացուցանէ զգավառն և զամենեսեան անհանգիստ պահէ ընդ իշխանութեամբ՝ բռնադատելով արտաքո իրավանց»[10]։

Լամբրոնացին ոչ միայն արձանագրել է սոցիալական անհավասարության փաստը, այլև գիտակցել դրա պատճառը։ Նա գրում է. «Ճշմարիտ այսպէս է, զի տնանգն թափուր գոլով յընչից, որով ահարկու երևին, ողոքանօք բարբառի, իսկ մեծատունն ընչիւքն և սպասաւորօքն յղփացեալ յանդգնութեամբ զոր ինչ ախորժէ՝ ասէ»[11]։ Նա գիտակցում էր, որ «ինչքն» է այն գործոնը, որը մարդուն իր ժամանակի հասարակության մեջ ուժ է տալիս և հանդուգն դարձնում։ «Ընչից» զուրկ անձնավորությունը «ողոքանօք բարբառի»։

Ապրելու համար մարդուն անհրաժեշտ են կենսամիջոցներ՝ սնունդ, հագուստ, բնակարան, ասում է Լամբրոնացին։ Մարդիկ աշխատում են հայթայթել դրանք, բայց քանի որ մարդու կարիքները կարող են աճել, իսկ կենսամիջոցներն էլ սահմանափակ են, ապա դրա պատճառով յուրաքանչյուրը ձգտում է ապահովել իրեն նյութական մեծ միջոցներով։ Կենսամիջոցներ հայթայթելու ժամանակ մարդիկ հաճախ խտրություն չեն դնում դրանց հասնելու եղանակների մեջ, սպանում են միմյանց, հարստահարում, զանազան զրկանք-

7 Նույն տեղում։

8 «Սրբոյն Ն. Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ», Վենետիկ, 1847, էջ 53։

9 Ձեռ. № 1142, էջ 153ա։

10 Նույն տեղում, էջ 187բ։

11 Նույն տեղում, էջ 116բ։

ներ պատճառում։ Ահա այս հետաքրքրական միտքը միջնադարյան մտավորականի շարադասությամբ. «Արար զմեզ աստուած յայս կեանս հարկաւորացն կարօտ, այսինքն՝ կերակրուց, սղեստուց, յարկաց, և ի սոցա պէտսն զբաղեալ զտաք յանչափութիւն, և վասն յանչափութեանն միմեանց ի հարստահարութիւն, և անտի ի նախանձ և թշնամութիւն, ուստի ծնանի սպանութիւն և զրկանք և ամենայն անկարգութիւն»[12]։

Լամբրոնացին, սակայն, չի մտածում, թե մարդկանց միջև պայքարը հետապնդում է սոսկ բավարար չափով կենսամիջոցներ ձեռք բերելու նպատակ և մղվում է միայն դրա համար։ Անշուշտ, նյութական պահանջմունքների բավարարումն առաջնային է, որովհետև դրանից է կախված մարդու ֆիզիկական գոյությունը։ Բայց, ըստ նրա, պակաս դեր չի խաղում նաև մարդկանց նախանձը միմյանց նկատմամբ, որը ունեցվածքը բազմապատկելու և դրանով հասարակության մեջ անհատի դիրքն ու տեղը երևելի դարձնելու նպատակ է հետապնդում։ Նախանձն, ուրեմն, ոչ թե սոսկ մարդու էությունից բխող բարոյական հատկանիշ է, այլ նախ և առաջ հետևանք է հասարակական հարաբերությունների ու պայմանավորված է դրանցով։ Լամբրոնացին դրում է. «Ոչ է այնքան ըստ պիտոից, որչափ առաւելապէս ըստ նախանձու, զի նախանձով մարդիկ առ իրեարս յաճախէն ի շինուածս, ժողովէն ստացուածս, շինեն և տնգեն։ Զի թէ չէր նախանձ մերձաւորին, բաւական էր թագաւորին իւր քաղաքն և աշխարհն։ Սակայն նախանձի ընդ համանունն՝ և փութա զնորին յափշտակել, և այսր կռիւք և արեանց հեղմունք։ Այսպէս նախանձն քոնադատէ զերկրագործն մերձեցուցանել զանդաստանն առ անդաստանն և զընկերին հանել, և ոչ բնական կարիքն... Արդ տեսանէ սա միանգամայն, զի ամենայն ջանի, և վաստակս, և զրկանաց, և անիրաւութեանց առաւել նախանձն է պատճառ, քան բնական պէտքն»[13]։ Ուշագրավ է նաև այս մտքի շարունակությունը. «Եւ նախանձս այսպէս ունի զընթացսն՝ առ մերձաւորն և ոչ առ հեռաւորն, զի ոչ նախանձի քաղաքացի ընդ զինւոր, և ոչ զինւոր ընդ երկրագործ, այլ իւրաքանչիւր ոք ընդ իւր գործակիցն՝ թագաւորն ընդ թագաւորն, իշխանն ընդ իշխանն, աղքատն ընդ աղքատն»[14]։ Այս դատողությունը պարզապես արտացոլումն է Լամբրոնացու ժամանակի իրավահարաբերությունների, որոնք հիմնված էին դասային աստիճանավորման վրա և բացառում էին ֆեոդալական հիերարխիայի առավել բարձր աստիճանի վրա աշխատավոր մարդու բարձրանալու հնարավորությունը։ Այս պատճառով էլ կարողության ու դիրքի հասնելու ձգտումը կարող էր դրսևորվել ու արտահայտվել միայն միևնույն դասի մարդկանց շրջանակներում։

Այսպիսով, Լամբրոնացու մտքերից հետևում է, որ նյութական պահանջմունքների բավարարման կենսաբանական գործոնին գումարվում է նաև հասարակական հարաբերություններից բխող հանգամանքը՝ նախանձը, որ մարդկանց մղում է «ի զրկելն զմիմեանս, ի տպանանել, ի հափշտել, ի բամբասել»[15]։

Լամբրոնացին գտնում է, որ սեփականության համար մղվող պայքարը դաժան է ու անմարդկային. «անկարգութիւն և հարստահարութիւն մարդկան ի

12 Նույն տեղում, էջ 205բ։
13 Նույն տեղում, էջ 225բ։
14 Նույն տեղում։
15 Նույն տեղում, էջ 226ա։

միմեանց և կամ տիրապէս ասել՝ ի դիւաց, և ոչ ոք է, որ մխիթարէ... Ի վերա յառնէն միմեանց և գազանային անմտութեամբ զրպարտեն զիրեարս։ Յայս է ամենայն ընթացք մարդկան»[16]։ «Մեծատունքն կլանեն զաղքատսն... այլք յարէն տուն առ տուն և անդաստան առ անդաստան և զընկերին հանեն...։ Լան, հառաչէն, ողբան, առ աստուած բողոքէն, առ մարդիկ աղաղակէն և մնան բազումք ի նոցանէ անմխիթարք։ Եւ որ երեկ ընչից տէր, այսօր կողոպտեալ և հացի քաղեալ, որ երեկ կենդանի, այսօր խոցոտեալ յաւազակաց՝ կիսամեռ, որ երեկ սրբութեամբ պատեալ, այսօր զրպարտեալ բանիւ և ընդ չարագործս արտաքսեալ, և ոչ ունի մխիթարութիւն առ ձեռն, զի քրիստոնէից մխիթարութիւնս սակաւաց է, և այս անագան ուրեմն»[17]։

Կյանքի արատներն ու անարդարությունները մերկացնող այս հատվածներում բացահայտված են հասարակական կյանքի հետևյալ երկու հիմնական մոմենտները. նախ, հասարակության սոցիալական շերտավորումը, ընդ որում՝ ունևորներն անպատիժ հարստահարում ու կեղեքում են աղքատներին ու նրանց թշվառության դուռը հասցնում, և երկրորդ, ցույց է տրվում, որ չկա մի ուժ կամ զորություն, որ օգնության ձեռք մեկնի կեղեքվողներին ու հարստահարվողներին, լսի նրանց բողոքը և ամոքի նրանց վիշտը։

Բուն փիլիսոփայական-իմացաբանական խնդիրներ Լամբրոնացու աշխատություններում համեմատաբար քիչ են արծարծվում, և այս հանգամանքը սահմանափակում է նրա փիլիսոփայական-ընդգիտական գիտելիքները բազմակողմանիորեն արտացոլելու հնարավորությունը, թեև կասկածից վեր է, որ այդ բնագավառում էլ Լամբրոնացին պետք է ունեցած լինի հայացքների ամբողջական համակարգ։

Ինչպես միջնադարյան մտածողների գերակշռող մեծամասնությունը, այնպես էլ Լամբրոնացին փիլիսոփայության հիմնական հարցը լուծել է կրոնա-իդեալիստական ոգով։ Նրա ըմբռնմամբ՝ առաջնայինն ու սուրբստանցիոնալը աստված է։ Նրանից է սկսվում ամեն ինչ ու նրանով է պայմանավորված ողջ գոյը։ Աստված հավերժ է, մշտական, անբևույթ, անքննելի, անճանաչելի և այլն։ «Աստծոյ անբևույթ բնութիւնն արարածովքս իմանի»[18],— գրում է Լամբրոնացին։ Նա աստծո գոյության կոսմոլոգիական ապացուցման դիրքերում էր կանգնած։ Բնության մեջ «կարգ» կա, յուրաքանչյուր առարկա և երևույթ իր նշանակությունն ու դերը՝ «պաշտօնն» ունի։ Այս վկայում է, որ եղել է ու կա նրա արարիչը։ Բնության երևույթների ներդաշնակությունն ու նպատակահարմարությունը աստծո ստեղծագործական մտահղացման կատարելության ցուցանիշներն են։ Միայն «չարամիտք» այս չեն ուզում խոստովանել, անտեսում են այս ու մերժում աստծո գոյությունը։

Հանդես գալով աստծո՝ որպես ստեղծագործող էության, որպես աշխարհը սկզբնավորողի և նրա օրինաչափությունները սահմանողի գաղափարի պաշտպանությամբ, Լամբրոնացին միաժամանակ այն միտքն է արտահայտում, թե մենք չգիտենք ի՞նչ է աստված, ինչպե՞ս է նա ստեղծագործել, ինչպե՞ս է նախախնամում արարվածներին և այլն։ Դիմելով համադրության, նա գրում է՝

16 Նույն տեղում, էջ 224ա։
17 Նույն տեղում, էջ 224բ։
18 Նույն տեղում, էջ 279բ։

ինչպես գիտենալով որ հողմը կա, բայց չգիտենք ի՞նչ է այն, որտեղի՞ց է գալիս, ո՞ւր է գնում, ի՞նչ գույն ու որակ ունի, «այսպէս և աստուած, գիտեմք զնա, զի է, զի զմեզ նախախնամէ և արարածոցս կառավարէ, բայց թէ որպէ՞ս է ինքն, կամ որպէ՞ս զսոսա վարէ՝ անհաս է ի մէնջ և յանճառութեան թևս հողմոց բարձրացեալ՝ հասողութիւն գիտութեան նորա»[19]։ Միջնադարում այսպիսի ըմբռնման կարելի է հանդիպել ոչ միայն Լամբրոնացու մոտ։ Չնայած աստվածաբանությանն անհարիր լինելուն, այն չի դիտվել որպես ուղիղ հավատից շեղում։

Ստեղծագործված բնությունը, ներառյալ նաև մարդը, չորս տարրերի միացություն են, պնդում է Լամբրոնացին, հետևերով բնության բաղադրության մասին միջնադարյան Հայաստանում անբաժան կերպով իշխող տեսակետին։ Տարրերը հավերժական են, նրանք ստեղծված են, բայց անոչնչանալի։ Նրանց միավորումից առաջացած առանձին գոյացումները՝ եզակի իրերն ու առարկաները վերջավոր են, ժամանակավոր ու անցողիկ, մինչդեռ տարրերն անվերջ են ու հավիտենական։ Չորս տարրերը «ոչ պակասեն և ոչ ունայնանան, որպէս մարդկան մարմինք, որ ի նոցանէ ունին զնիւթ գոյացութեանն»[20]։ Տարրերը՝ «երկիր և հուր, և հողմ, և ջուր» թանձր նյութ են՝ «ոչ են անմարմինք»։ Աստված նրանցից յուրաքանչյուրին տվել է որոշակի բնություն և անխախտ կայունություն։ Ի հակադրություն առանձին իրերի, օրինակ, մարդու, որը կարող է ոչնչանալ՝ «ի կենդանութենէ, ի շարժողութենէ և ի բանաւորութենէ ապականութեան և ոչ էութեան» մատնվել, տարրերը հավիտենական են։ Այս առումով նրանք ավելի կատարյալ են, քան մարդը, «թեև զգաւութեամբ և բանաւորութեամբ գերազանց եմք, քան զնոսա»[21]։

Նյութի հավերժականության մասին միտքը Լամբրոնացու մոտ շատ որոշակիորեն է դրսևորվում։ Ճիշտ է, կրոնական թաղանթում, բայց և այնպես նա արտահայտել է հետևյալ առողջ տեսակետը. «Յաւէտ է աստուած, յաւիտեան՝ հրեշտակք, յաւիտեան և նիւթս ի ներկայս և լուսաւորք, իսկ մարդ և այլ կենդանիք ապականացուք և անցաւորք... Իսկ թէ յաւիտեան զնիւթս մի զարմանար, զի յաւիտեան՝ որչափ այս աշխարհս է»[22]։

Լամբրոնացու տարրաբանական ըմբռնումների մեջ առկա է նաև տարրերի հակասական հատկանիշներ ունենալու մասին միտքը։ «Թշնամիք, անհաշտելիք են տարբերքս չորս ծայրին՝ չորութեամբն և խոնաւութեամբն, ջերմութեամբն և ցրտութեամբն»[23], —գրում է նա։ Ընդ որում, «իւրաքանչիւր ոք երկու ծայր ունի», հողն ունի «ցրտութիւն և չորութիւն», ջուրը՝ «խոնաւութիւն և ցրտութիւն», հուրը՝ «ջերմութիւն և չորութիւն», օդը՝ «ջերմութիւն և խոնաւութիւն»։ Տարրերի նման հատկանիշները նրանց միացման, իսկ տարբեր հատկանիշները՝ բաժանման հիմք են։ Յուրաքանչյուր առարկա հակասական հատկանիշներ ունեցող տարրերի միասնություն է։

Նյութերի բացակայության պատճառով Լամբրոնացու տարրաբանական ըմբռնումների մասին ավելին ասել հնարավոր չէ։ Ավելի հանգամանորեն կարելի է ներկայացնել Լամբրոնացու հայացքները իմացության պրոբլեմի շուրջը։

19 Ձեռ. № 4694, էջ 443ա։
20 Ձեռ. № 1142, էջ 203բ։
21 Նույն տեղում։
22 Նույն տեղում, էջ 219ա։
23 Ձեռ. № 5650, էջ 361բ։

Ամենից առաջ պետք է ասել, որ մարդու ճանաչողական հնարավորություններ-ի վերաբերյալ նրա դատողությունների մեջ թերահավատություն է նկատվում։ Հատկապես տիեզերքի, ինչպես նաև բնության ու նրա մի շարք երևույթների մասին եղած գիտելիքները Լամբրոնացին անբավարար է համարում և միաժամանակ տարակուսանք է հայտնում այդ բնագավառում մարդկային իմացության հետագա նվաճումների նկատմամբ։ Նկատի ունենալով բնության մի շարք երևույթներ, նա գրում է, թե «ահա այս ամենայն անհաս մնա ի մարդկան գիտութենէ, քանզի ոչ կարեմք յերկինս ձգտել և իջանել, և զլուսաւորացն կարգ պատմել, ոչ հողմս ժողովել և գիտել, թէ ուստի շնչեն, և ոչ ջուրս ամփոփել և գիտել զորքանն, և ոչ ի ծագս երկրի կարող եմք ժամանել։ Արդ, որովհետև այսոքիկ անհաս մնան ի մենջ, ե՞րբ կարեմք պարծել, թե իմաստուն եմք ըստ բնական գիտութեանս»[24]։

Միջնադարյան հայ մտավորականը այն միտքն է հայտնում, թե գիտելիքների խնդրում (բացառությամբ աստվածաբանության) և հասարակական կյանքի բնագավառում մարդկությունն առաջընթաց չի ապրել։ «Մի պարծեսցի ոք յանձն,— գրում է նա,— թէ բան նոր խօսի կամ գործ նոր կատարէ և ինքն յանձնէ ի վերա նորին պանծասցի, զի այն նախ քան զինքն յառաջնոցն լեալ է՝ և իմաստուն խօսքն, և վաելչական գործն։ Բայց մի գտցի տեղի աստ հելլենացի փիլիսոփայից կարծիք, որք շրջան փոփոխման տան կարծիս ինքնեղութեան արարածոցս և յաւիտենականութեան... Եւ այսպէս ընթանան մարդիկ ընդ կեանս աշխարհիս միմեանց նմանութեամբ, և զոր առաջինքն գործեցին, վերջինքն ի նոյնն փութան՝ զհարկաւոր գործս և զանհարկս»[25]։

Այսպիսով, Լամբրոնացին այն կարծիքին է, թե իր ժամանակաշրջանում երևան եկող «խօսքը» և «գործը» նորություն չեն պարունակում, այսինքն՝ գիտելիքները (բացառությամբ աշխարհի արարչագործության մասին քրիստոնեական-աստվածաբանական ուսմունքի) հույն փիլիսոփաների տեսակետների կրկնությունն են, իսկ կյանքն ընթանում է հիմնականում ճիշտ այնպես, ինչպես «առաջինքն գործեցին»։ Անշուշտ, միջնադարյան մտածողից չենք կարող պահանջել, որ նա հասկանար ու արձանագրեր սոցիալ-դասակարգային այն տարբերությունները, որոնք էականորեն զանազանում են միմյանցից երկու տարբեր դարաշրջանները՝ ստրկատիրականն ու ֆեոդալականը։

Մարդիկ, ըստ Լամբրոնացու, կյանքի ընթացքում անհրաժեշտ նյութական միջոցների հայթայթման համար ձեռք են բերում որոշ աշխատանքային փորձ ու գիտելիքներ և դրանք հաղորդում են հաջորդ սերնդին, նրանց՝ «որ զկնի մեր գան»։ Սրանք, օգտվելով նախորդ սերնդի փորձից, կատարում են հիմնականում նույն գործողությունները։ Դրանք, ըստ Լամբրոնացու, սերնդե սերունդ չեն փոխվում. «Զի լինի ի մենջ այն գործն, զոր առաջինքն արարին և զոր մեք առնեմք, որ զկնի մեր գան՝ զնոյնն վերստին գործեն։ Եւ նոր գործ չկատարի ի մարդկանէ, որ ընդ արեգակամբս բերիմք, այլ զոր ուսաք և տեսաք՝ գործեմք՝ շինել, տնկել, խօսել, գործել, վարել զաշխարհս և վաելել։ Զայս զանազան գործս մեք յառաջագոյն յաջորդեցաք և որք զկնի մեր գան ի մենջ առնուն և ուսանին»[26]։ Այս դատողությունից հետևում է, որ Լամբրոնացին մարդկության

24 Ձեռ. № 1142, էջ 148ա։
25 Նույն տեղում, էջ 204ա։
26 Նույն տեղում։

կյանքի ողջ պատմությունը ընկալում է որպես հիմնական գործողությունների կրկնողություն՝ նույն հիմքի վրա։ Անշուշտ, ճիշտ է նա, որ քաղաքակրթության պատմության ընթացքում մարդկանց գործողությունների բովանդակությունը հիմնականում չի փոխվում, դրանք ուղղված են կենսամիջոցներ հայթայթելուն և մարդիկ միշտ գործել են իրենց հոգևոր ու նյութական կարիքները բավարարելու համար։ Բայց նա սխալվում է, երբ չի տեսնում, որ դարերի ընթացքում փոխվում են նյութական ու հոգևոր կարիքները հոգալու ձևերն ու եղանակները և դրանց հիման վրա՝ նաև մարդկանց հարաբերությունների ձևերն ու եղանակները։

Անդրադառնալով ճանաչողության ձևերի ու մեթոդների վերաբերյալ Լամբրոնացու հայացքներին, նախ պետք է ասել, որ նա մեծ նշանակություն էր տալիս իմացության զգայական աստիճանին, առանց որի առհասարակ անհնարին է որևէ գիտելիք։ Զգայական ճանաչողությունը սկիզբ ու ակունքն է ամեն մի գիտելիքի, «զոր օրինակ,— գրում է նա,— ի ծնէ կոյր յորժամ լսէ ի մենջ, թէ է արեգակն և աստեղք՝ հաւատա և խօսի զնոցանէ, բայց թեև բազում անգամ արկանէ ի գործ զիմացականն, զէութիւն նոցա, որակութիւն ոչ կարէ սահմանել, այնու զի մարմնով ոչ է տեսեալ»[27]։ Լամբրոնացին սրանով միաժամանակ ցանկացել է ասել, որ մարդու գիտելիքները որևէ երևույթի կամ առարկայի մասին չեն կարող ստույգ լինել, եթե նա մոտիկից չի շոշափել ու չի ընկալել առարկան։ Վերոհիշյալ օրինակը նա բերում է նաև այն միտքն ապացուցելու համար, թե մենք չգիտենք ու չենք կարող իմանալ աստծո և հրեշտակների մասին, քանի որ դրանց մասին խոսելիս նման ենք կույրի, որովհետև երբևէ չենք տեսել դրանց։

Սակայն, չնայած այս հանգամանքին, Լամբրոնացու իմացաբանությունը ավելի շատ ռացիոնալիստական երանգ ունի, քան սենսուալիստական։ «Իմաստութիւն,— գրում է նա,— ստուգաբանի իմացումն կամ անցելոց իրացն կամ առաջիկայիցն՝ յորս կարէ հասանել տեսողական մտացս հանճար և ոչ զգայարանս, քանզի զգայարանքս միայն զհպերսն յինքն քննէ, իսկ իմացումն մտաց ելանէ յերկինս, ընթանայ ի ծագս աշխարհի, յիշէ զանցեալսն, տեսանէ զառաջիկայ պատահումն»[28]։ Բացի այս, զգայական ընկալումը, որը կապված է մարմնի հետ, ինքնին պասսիվ է։ Ակտիվը բանական միտքն է, որը և պայմանավորում ու ուղղություն է տալիս զգայություններին։ Խոսելով մտքի և զգայությունների, հոգու ու մարմնի հարաբերության մասին, նա գրում է. «Կին կոչէ դարձեալ բանական մտացն զմարմինն և զգայարանսն, զի որպես տկար է կինն, քան զայրն և ի նմանէ բեղմնաւորի և պտղաբերէ, այսպէս մարմինս տկար է, քան զմիտսն և ի նորա սերմանցն և յազդմանցն բեղմնաւորին զգայարանքս և պտղաբերեն, լեզու՝ զխօսս, աչք՝ զտեսութիւն, ունկն՝ զլսելութիւն, ձեռքն՝ զշօշափումն և այլն։ Եւ անկար է սոցա ներգործելոյ առանց մտացն ազդելոյ»[29]։ Մի այլ տեղ նա գրում է. «Իմաստութեանս անուն ի զանազան տեսակս բացատրի, սակայն բնօրն ներգործութիւն է իմացող մտացն և ոչ զգայարանացն։ Արդ, իմաստութիւն էր հելլենացոցն, որով ձգտեցան ի լուսաւորացդ շաւեղս, յերկրային նիւթաց որոշմունք, ի բնութեանս տեղեկութիւն՝ յորս նե-

27 Ձեռ. № 4694, էջ 94բ։

28 Նույն տեղում, էջ 240բ—241ա։

29 Նույն տեղում, էջ 566բ։

բակրթութեամբ ստացան բազում իրաց կանխագիտութիւն։ Իմաստութիւն է և զանազան արհեստից գիւտք, զի իմացող միտքն շարժէ զսգաարանս՝ առ իւրաքանչիւրոց կատարումն։ Իմաստութիւն է և բանից ընտրութիւնք և բացատրութիւն ստուգութեանն ի ստութենէն, և առ ի նոյնն ճարտարութիւն՝ ի խոհական մտացն յառաջ եկեալ»[30]։

Մեկնաբանելով Հին կտակարանի գրքերից մեկի Գ. գլխի այն միտքը, թե «Ամենեցուն ժամանակ է, և ժամ ամենայն իրաց ի ներքոյ երկնից. ժամանակ ծնանելոյ և ժամանակ մեռանելոյ, ժամանակ տնկելոյ և ժամանակ խլելոյ անկեալն...», Լամբրոնացին եզրակացնում է. «Եւ այսպէս տիրէ ժամանակն պատուիրանացն և ոչ թէ պատուիրանն՝ ժամանակին։ Եւ ոչ կարէ օրէնք զմարգն միշտ իւրն ծառա պահել, այլ ինքն ծառաէ ընտրողութեան ժամանակին»[31]։ Այս եզրակացությունը հակասում է կրոնական գոգմատիկային և նշանակում, որ չպետք է կուրորեն հետևել սկզբունքներին՝ «պատուիրանացն». դրանք դուրս չեն ժամանակից, մշտական ու հավիտենական ճշմարտություններ չեն։ Դրանցից պետք է ընտրել այն, ինչ թելադրում է ժամանակը, այլ կերպ ասած՝ պատմական հանգամանքները, կյանքն ու պայմանները։

Զարգացնելով իր թեզը, Լամբրոնացին հարց է տալիս՝ ո՞րն է լավը՝ պատերա՞զմը, թե՞ խաղաղությունը և պատասխանում է. անշուշտ՝ խաղաղությունը։ Բայց, արդյո՞ք, միշտ, բոլոր պարագաներում պետք է խաղաղության ձգտել և խաղաղություն քարոզել։ Ո՛չ, պատասխանում է Լամբրոնացին, թշնամու դեմ, երբ նա չար գործեր է նյութում, պետք է պատերազմել, «իսկ առ եղբարս կալ խաղաղութեան»։ «Եւ տես,— շարունակում է նա,— զի օրենք խաղաղութեանն ոչ է հանապազ ողջունելի, այլ ժամանակի ընտրողութեամբ... Թէ հնար է՝ ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն կալչիք, յորժամ ոչ եղև հնար՝ ընտրեաց զպատերազմելն»[32]։

Լամբրոնացին նույն կերպ է մոտենում նաև բարոյական կատեգորիաներին։ Ոչ մի հասկացություն և ըմբռնում, ըստ նրա, քարացած չէ։ Ժամանակը, տեղն ու հանգամանքներն են որոշում նրանց ճշմարիտ կամ սխալ, լավ կամ վատ, առաքինի կամ անբարոյական, չար կամ բարի, տգեղ կամ գեղեցիկ և այլն լինելը։ Երևույթների թե՛ քաղաքական, թե՛ բարոյական գնահատականն ու բնութագիրը հարաբերական են։ Տարբեր պարագաներում նրանք փոխում են իրենց տեղը, անցում է կատարվում մեկից մյուսը, չարը կարող է բարի դիտվել, անիրավը՝ իրավացի, անօրինականը՝ օրինական, տհաճը՝ հաճելի և այլն։ Այսպես, օրինակ՝ «Օրենքն ասէ՝ մի ոպանաներ, բայց պատշաճ ժամանակն զսպանանելն օրինացն լրումն էցույց և զոչ սպանանելն արհամարհութիւն»[33], կամ «Զաղքատն կերակրելով բժշկեա և հիւանդն գեղօք... առ այսպիսի բժշկութիւն խոնարհելովն՝ գովիս, ապա թէ զանարժանն բժշկես՝ պարսաւիս»[34]։ Դարձյալ մի օրինակ՝ «Կարկուտն և ջուրն մի են բնութեամբ, բայց սա վնասէ զերկիր և նա սնուցանէ»։ Այսպես է նաև խորհուրդը. այն կարող է լինել չար կամ բարի, թեև երկու դեպքում էլ խորհուրդ է[35]։

30 Ձեռ. № 1142, էջ 4բ։
31 Նույն տեղում, էջ 218բ։
32 Նույն տեղում։
33 Նույն տեղում, էջ 217ա։
34 Նույն տեղում։
35 Ձեռ. № 4694, էջ 95բ։

Բազմաթիվ են նման օրինակները, որոնց մեջ նկատվում է կյանքը, հասարակական ու բնության երևույթները փոփոխման մեջ ընկալելու ու բացատրելու անկասելի տենդենց։ Լամբրոնացին գտնում է, որ ինքնին, առանց նկատի առնելու ժամանակն ու պայմանները, բնութագրող հասկացությունները «անկատար են», այսինքն՝ դեռևս ճիշտ կամ սխալ լինել չեն կարող «ոչ մեղքն մեղք է և ոչ արդարութիւնն՝ արդարութիւն», դրանք իմաստավորվում են կոնկրետ գործողության մեջ, որոշակի ժամանակի ու պայմանների մեջ. «Զի որ արդարութիւն է խոստովանեալ՝ ի տարադէպ ժամու երբ գործի՝ մեղք է ծանրագոյն, և որ յանցանքն է խոստովանեալ՝ ի դէպ ժամու երբ գործի՝ արդարութիւն է»[36]։ Հետաքրքրական է Լամբրոնացու հետևյալ դատողությունը. «Է ի մեջ մարդկան և անասնոց այսպիսի հասարակութիւնս, զի պատահման ի ներքո են և պատահմամբք հանդիպի ի նոցա կենցաղոյս ընթացք՝ ոմն վիճակի յառողջութիւն և ոմն ի հիւանդութիւն, ոմն ի մեծութիւն և միւսն յաղքատութիւն։ Մի անասնո պատահե զենումն և միւսոյն զնոյն պատահէ ուտել, զմի թռչունն ձեռասուն առնեն թագաւորք և պատուեն, և զմինն առաջի նորա թռուցանեն ըմբռնել։ Եւ ոչ թէ բնութենէ այս սահման, այլ պատահմանն, զի ամենայն բնութիւն մարդո մի է և սգաարանք նոյն, սակայն պատահմունք չարին և բարո ի վերա նոցա զանազանք և անթիւք։ Նոյնպէս և ի վերա անասնոց՝ մի կաքաւուն պատահէ զերծանել ի բազէն և զմիւսն ըմբռնէ, մի եղջերուին պատահէ խոցոտել սլաքաւ և միւսոյն փախչել։ Ոմանք յերկարին ի կեանս ի մարդկանէ և յանասնոց, և այլք՝ կարճին, և յայս ածէ զնոսա պատահումն և ոչ բնութիւնն։ Արդ, այսպէս գան ի մահն պատահմամբ և ոչ կարգաւ և մարդիկ և անասունք, զի ձգէ պատահումն զոմանս ի կարճ ժամանակս և զոմանս յերկայնս»[37]։

Այս դատողությունից հետևում է, որ հայ փիլիսոփան չի մերժում պատահականությունը բնության մեջ և հասարակական կյանքում։ Նա պատահականությունը սահմանում է որպես մի բան, որը չի բխում տվյալ իրի, առարկայի, երևույթի բնությունից, էությունից ու կարող է լինել կամ էլ չլինել։

Այսպիսով, Լամբրոնացու փիլիսոփայական հայացքների մեջ դրսևորվում են նրա մտքի խորությունն ու ուրույն մտածողությունը։ Լամբրոնացու փիլիսոփայական հայացքների մեջ քիչ չեն հետաքրքրական, առողջ ու խոր իմաստ պարունակող դատողությունները։ Դրանք բավարար հիմք կարող են ծառայել Լամբրոնացուն բարձր գնահատելու ու արժեքավորելու ոչ միայն որպես հասարակական-քաղաքական գործչի, այլև տեսաբանի և փիլիսոփայի։

ФИЛОСОФСКИЕ ВЗГЛЯДЫ НЕРСЕСА ЛАМБРОНАЦИ

Г. О. ГРИГОРЯН

Резюме

Видный армянский общественный деятель и мыслитель Нерсес Ламбронаци (1153—1198) выступал преимущественно как публицист. Однако в его трудах имеются рассуждения и философско-теоретического характера.

36 Ձեռ. № 1142, էջ 218բ։

37 Ձեռ. № 4694, էջ 223ա։

Ламбронаци отвергал мысль о предопределенности воли человека и исторических явлений и с этих позиций рассматривал общественно-политические проблемы. Не выступая против монархического строя, он отрицательно относился к абсолютизму и призывал ограничить действия властителей рамками закона. Констатируя факт социального неравенства, Ламбронаци сознавал, что причиной этого является различие в имущественном положении людей.

Субстанциональным началом мира для Ламбронаци является бог. Он придерживался космологического доказательства бытия бога.

В теории познания Ламбронаци наблюдаются моменты скептицизма. Ламбронаци с некоторым недоверием высказывается о человеческих возможностях проникновения в тайны предметов и явлений природы и вселенной в целом.